ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՏՊ- Ծ1153.Մ11001/26-2
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 09 » «փետրվար» 2026թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մանգասարյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռ. Սարգսյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի 1153 «Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր» ծրագրի 11001 «Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Կազմակերպությանը հատկացնել 2026 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված չափաքանակից 31,385.000 (երեսունմեկ միլիոն երեք հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է աշխատանքներն իրականացնել սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 1 հավելվածով նախատեսված միջոցառումներին (այսուհետ՝ Միջոցառում) համապատասխան, N 2 հավելվածով սահմանված ֆինանսական ցուցանիշների շրջանակներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում իրականացվող Միջոցառումները, կամ դրա իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. անհրաժեշտությամբ պայմանավորված կատարել առանձին Միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով Նախարարության կողմից տրամադրված գումարների հաշվառումն իրականացնել՝ հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված N20 ստանդարտի դրույթներին համապատասխան.

2.4.2. Միջոցառումների իրականացման նպատակով ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված ֆինանսական ցուցանիշներին համապատասխան.

2.4.3. կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Նախարարությանը ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում կատարված փոխհատուցման ենթակա ծախսերի վերաբերյալ «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով» սահմանված տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի.

2.4.5. Նախարարությանը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն հրամանով սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները.

2.4.6. Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում Գլխավոր ֆինանսիստի հաստատմանը ներկայացնել 2026 թվականին սույն պայմանագրով իրականացվող եկամուտների և ծախսերի նախահաշիվը: Ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով պայմանավորված՝ համապատասխան հիմնավորումների հետ միասին, Նախահաշվի յուրաքանչյուր փոփոխություն ներկայացնել Գլխավոր ֆինանսիստի համաձայնեցմանը, այնուհետև՝ հաստատմանը:

2.4.7. 2026 թվականի հաստատված եկամուտների և ծախսերի նախահաշվով նախատեսված միջոցների շրջանակներում անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել գնումների մասին << օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով.

2.4.8. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.9. Նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում, Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը Միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով կարող է իրականացնել մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությունը հաշվետու ամսվա ավարտից հետո նախարարության պատասխանատու ստորաբաժանում է ներկայացնում Միջոցառումների իրականացման վերաբերյալ Եզրակացություն՝ համաձայն N 5 հավելվածի:

4.2. 4.1 կետով սահմանված Եզրակացության դրական գնահատման դեպքում Կազմակերպությունը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 17-ը, Նախարարություն է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի երկուական օրինակ՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 4 հավելվածի:

4.3. Կազմակերպությունը՝ հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն է ներկայացնում կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 3 հավելվածի:

4.4. Նախարարությունը՝ հանձնման-ընդունման ակտը ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված և կնքված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը ներկայացնում է Կազմակերպությանը, իսկ չստորագրման դեպքում՝ դրա պատճառաբանված մերժումը.

4.5. Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության պատասխանատու ստորաբաժանումների կողմից գնահատվում է ՀՀ ԱՍՀՆ 22.06.2016թ" N 69-Ա/1 հրամանի 2.10 կետի, նույն հրամանի N 3 հավելվածով հաստատված եռամսյակային հաշվետվության հիման վրա: Միջոցառումների իրականացման 75% և ավել արդյունքի դեպքում պատասխանատու ստորաբաժանումը տալիս է դրական եզրակացություն՝ համաձայն N 5 հավելվածի: 75% -ից ցածր արդյունքի դեպքում, սույն պայմանագիրը ենթակա է վերանայման:

4.6. ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետով պայմանավորված՝ կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված տարեկան աշխատանքների արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

5. Պայմանագրի գինը

5.1. Սույն պայմանագրի գինը 2026 թվականի համար կազմում է 31,385.000 (երեսունմեկ միլիոն երեք հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ ներառյալ նաև բոլոր հարկերը, տուրքերը ու պարտադիր այլ վճարները:

5.1.1.Պայմանագրի տարեկան գինը կողմերի համաձայնությամբ կվերանայվի լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

5.2.Կազմակերպության հետ պայմանագիր կնքելուց հետո Կազմակերպությանը տրամադրվում է կանխավճար՝ պայմանագրի գնի 1/12-րդ չափով, դեկտեմբեր ամսին մարելու պայմանով:

5.3. Պայմանագրի գինն իր մեջ ներառում է հաստատուն ծախսեր.

5.3.1. հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի չափը կազմում է 31,385.000 ՀՀ դրամ:

5.4. Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ սույն պայմանագրի 8.3-րդ կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

5.5. Նախարարությունը՝ Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների դիմաց փոխհատուցում է անկանխիկ՝ իր գանձապետական հաշվից գումարը Կազմակերպության գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագրին կից N 4 հավելվածով սահմանված «Հանձնման-ընդունման» երկկողմանի ստորագրված ակտի հիման վրա, սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ֆինանսական միջոցների

սահմաններում, բայց ոչ ավելի, քան տվյալ ժամանակահատվածի (տարեսկզբից աճողական) համար նախատեսված գումարի չափից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացված Միջոցառումների դիմաց վճարվելիք գումարի չափը սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված գումարի չափին գերազանցելու դեպքում, վճարումն իրականացվում այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

8.2. Սույն պայմանագրից ծագած՝ կողմերի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցմամբ, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց կողմերի գրավոր համաձայնության:

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր (համաձայնագրեր)

կնքելու միջոցով, որը (որոնք) կհանդիսանա (կհանդիսանան) սույն պայմանագրի անբաժանելի մասը (մասերը):

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով.

8.5. Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3, 4, 5 հավելվածները բաղկացած են 9 էջից և համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասերը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն՝	**Կազմակերպություն՝**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարության 3 շենք	ք. Երևան, Կ. Ուլնեցու 68
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011216091	Հ/Հ 900018003831
ՀՎՀՀ 01506515	ՀՎՀՀ 00802759
Նախարարության գլխավոր քարտուղար՝	«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝
Ա. Մանգասարյան _____ (ստորագրություն)	Ռ. Սարգսյան _____ (ստորագրություն)
Կ. Տ.	

Հավելված N 1
2026թ. « մերժ մարտ » « 09 » -ին
կնքված N ԴՏՊ- Ծ1153.Մ11001/26-2 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**վերջնաժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1.	Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրման աջակցություն:	Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրում, երեք ծրագրի և մեկ միջոցառման գնահատման իրականացում:	1. 1184. «Ավանդների և այլ փոխհատուցումներ», 1088 «Զբաղվածության ծրագիր», 1225 «Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն», ծրագրերի և 1117. «Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» ծրագրի «11003. Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում» միջոցառման մոնիթորինգի և գնահատման իրականացում: 2.ՀՀ Աշխատանքի և	**Ակնկալվող արդյունքներ** 11184. «Ավանդների և այլ փոխհատուցումներ», 1088 «Զբաղվածության ծրագիր», 1225 «Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն» ծրագրերի և 1117. «Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» ծրագրի «11003. Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում» միջոցառումը գնահատված են: 2.ՀՀ Աշխատանքի և	31.12.2026	Սույն պայմանագրով նախատեսված և օրենսդրությամբ չարգելված միջոցների շրջանակներում:

N/N	Հիմնադրամի անվանումը	Հիմնադրամի գործունեության հիմնական նպատակները	Հիմնադրամի գործունեության ուղղությունները	Հիմնադրամի գործունեության ընդհանուր արդյունքները	Հիմնադրամի գործունեության ընդհանուր ծախսերը (դրամ)

N/Ի	Ընտրանքի	Հանձնաժողովի անդամների	Հանձնաժողովի նախագահի	Հանձնաժողովի քարտուղարի	Հանձնաժողովի անդամների (լրիվ) ստորագրությունները
	Հարմարեցված մրցույթային հարցաշարի ամբողջական տարբերակը				
			Հարցաշարի հեղինակ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռ. Սարգսյան Կազմակերպություն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վարչական ղեկավարման գլխավոր քարտուղարություն Համաձայնեցվել է՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախարարի տեղակալ Ա. Մանասյան Հաստատվել է՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախարարի տեղակալ Ա. Մանասյան 4.Տարց՝ Ինչպիսի՞ գործակիցներ կարող են հաշվարկվել ստացված տվյալների հիման վրա՝ հաշվարկային գործակիցներ՝ գործակիցների հիշեցումներ՝ հարկերի գանձման գործակիցներ՝ գանձարանային գործակիցներ՝ գանձարանային գործակիցներ՝ գանձարանային

Պլան-ժամանակացույց
«Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում» ծրագրով նախատեսված « Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրման աջակցություն» հետազոտության

Հ/Հ	Գործողության անվանումը	Կատարման ժակետը
Ա	1184. «Ավանդների և այլ փոխհատուցումներ», 1088 «Զբաղվածության ծրագիր» և 1225 «Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն» ծրագրերի և 1117. «Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի «11003. Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում» միջոցառման մոնիթորինգի և գնահատման իրականացում, այդ թվում	05.01.2026-30.11.2026
1.	**Տեղեկանքի և ՄԳ անձնագրի մշակում, այդ թվում**	**30.03. 2026**
1.1.	Տեղեկատվության հավաքագրում՝ ըստ ԱՍՀԱԻ-ի կողմից ներկայացված ձևաչափի	10.02.2026
1.2.	Տեղեկանքի և անձնագրի նախագծի մշակում	01.03.2026
1.3.	Մշակված նախագծի քննարկում և առաջարկությունների ներկայացում	10.03.2026
1.4.	Տեղեկանքի և անձնագրի վերջնական մշակում	30.03.2026
2.	**Տրամաբանական շրջանակի նախագծի մշակում և մշտադիտարկման ցուցանիշների հավաքագրում, այդ թվում**	**30.05.2026**
2.1.	Տրամաբանական շրջանակի նախագծի մշակում	30.03.2026
2.2.	Հավաքագրվող ցուցանիշների ձևաչափի մշակում	15.04.2026
2.3.	Հավաքագրվող տեղեկատվության վերաբերյալ քննարկումների կազմակերպում՝ ըստ անհրաժեշտության	20.04.2026
2.4.	Տեղեկատվության ներկայացում՝ ըստ ձևաչափի	30.05.2026
3.	**Տրամաբանական շրջանակի վերջնական մշակում, այդ թվում**	**15.06.2026**
3.1.	Մշակված նախագծի քննարկում և առաջարկությունների ներկայացում	10.06.2026
3.2.	Տրամաբանական շրջանակի վերջնական մշակում	15.06.2026
4.	**Գնահատման ցուցանիշների հավաքագրում, այդ թվում**	**30.09.2026**
4.1.	Հարցաթերթերի նախագծերի մշակում	30.06.2026
4.2.	Մշակված հարցաթերթերի նախագծերի վերաբերյալ քննարկումների անցկացում և առաջարկությունների ներկայացում	05.07.2026
4.3.	Հարցաթերթերի վերջնական մշակում և փորձարկում	15.07.2026

Հ/Հ	Գործողության անվանումը	Կատարման ժակետը
4.4.	Ընտրանքի ձևավորում, հարցումների անցկացում, տվյալների մուտքագրում և վերլուծական բազաների ձևավորում	30.09.2026
5.	**ՄԳ ամփոփ հաշվետվության պատրաստում, այդ թվում**	**30.11.2026**
5.1.	ՄԳ հաշվետվության նախագծի պատրաստում	10.11.2026
5.2.	ՄԳ հաշվետվության նախագծի վերաբերյալ կարծիքների ներկայացում	20.11.2026
5.3.	ՄԳ հաշվետվության վերջնական լրամշակում	30.11.2026
Բ.	ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2022 թվականի օգոստոսի 3-ի N 100-Ա/1 «Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի (մատուցվող ծառայությունների) մշտադիտարկման և գնահատման կարգը և մեթոդաբանությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի հունիսի 28-ի N 70–Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանի լրամշակում:	Հունվար – օգոստոս
Գ.	ՀՀ ԱՍՀ նախարարության ենթակայությամբ գործող երեխաների շուրջօրյա և ցերակային խնամք իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև պատվիրակված ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների մոնիթորինգի գործիքակազմի լրամշակում	Մարտ – սեպտեմբեր
Դ.	Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող միջոցառումների մոնիթորինգի գործիքակազմի լրամշակում:	Մայիս – հոկտեմբեր
Ե.	Տարեկան ամփոփ հաշվետվության ներկայացում	Դեկտեմբեր

Նախարարություն՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մանվելյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Կազմակերպություն՝

«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝

_____ Ռ. Սարգսյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N2
2026թ. «09» «փետրվար»-ին կնքված
N ԴՏՊ- Ծ1153.Մ11001/26-2 պայմանագրի

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի 1153 «Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր» ծրագրի 11001 «Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում» միջոցառման շրջանակներում «Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրման աջակցություն» ծառայությունների իրականացման նպատակով «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին դրամաշնորհի տրամադրման համար սահմանվող

1. Միջոցառումների թիվը — 1 հատ

2. Հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի չափը՝ — 31,385.0 հազ.դրամ

3. Տրամադրվող դրամաշնորհի չափը — 31,385.0 հազ.դրամ

Հաստատուն ծախսերի գծով

ա/ հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի տրամադրման ժամանակացույց.

Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)	Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)
հունվար	2615.4	հուլիս	18307.8
փետրվար	5230.8	օգոստոս	20923.2
մարտ	7846.2	սեպտեմբեր	23538.6
ապրիլ	10461.6	հոկտեմբեր	26154.0
մայիս	13077.0	նոյեմբեր	28769.6
հունիս	15692.4	դեկտեմբեր	31385.0
Ընդամենը			***31385.0***

բ/ հաստատուն ծախսերի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական ծածկագրի.

Տնտեսագիտական դասակարգման կատեգորիաների անվանումը	Ծածկագիրը	Տարեկան չափաքանակը (հազ.դրամ)
Աշխատանքի վարձատրություն	410000	23998.6
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	420000	2246.6
Այլ ծախսեր	480000	5139.8
Ընդամենը		***31385.0***

Նախարարություն
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար՝

Ա. Մանգասարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Կազմակերպություն
«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝

Ռ. Սարգսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

N 3 Հավելված
2026 թ. «09» մարտի N 09-Ն հրամանի
N ԴՏՊ - Ծ1153.Մ1000/26-2 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի 1153 «Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր» ծրագրի 1000«Մեթոդաբանական ձեռնարկների մշակում. հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում» միջոցառման շրջանակներում «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին ամսում փոփոխուն և հաստատուն ծախսերի գծով փոխհատուցման

ենթակա գումարի վերաբերյալ

Հազարդրամ

Ծախսային հոդվածներ					Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման ծածկագիրը											
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշիվների անվանումը	Ծածկագիրը	Հաստատված նախահաշվի գումարը	Ճշգրտված նախահաշվի գումարը	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	բարեգործական կազմակերպության անվանումը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝		x	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Փոփոխուն ծախս			0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Ժամավճարային վարձատրություն		411000	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Հաստատուն ծախս			0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ		411000	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Մշտական աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	411110									
	Ժամանակավոր աշխատողներին վճարվող աշխատավարձ	411120									
	Դասընթացների դասընթացավարների վրա վճարվող աշխատավարձ	411130									
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ		412000	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Պարգևատրումներ	412210									
	Դրամական խրախուսումներ	412220									
Էներգետիկ ծառայություններ		421200	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Էներգետիկ ծառայություններ	421210									
	Ջեռուցման ծառայություններ	421220									
Կոմունալ ծառայություններ		421300	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ	421310									
	Այլ կոմունալ ծառայություններ	421390									
Կապի ծառայություններ		421400	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Կապի արտաքին ծառայություններ	421410									
	Միջքաղաքային հաղորդակցության գումար										
	Ինտերնետային կապ										
Ապահովագրական ծախսեր		421500									
	Գույքի ապահովագրություն	421510	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում		423000									
	Հանձնարարական ծառայություններ	423200	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Տեղեկատվական ծառայություններ	423400									
Ներքին գործուղումներ		422100									
	Ներքին գործուղումների օրապահիկ	422110	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ներքին գործուղումների գծով նստավայրային ծախսեր	422120									
	Ներքին գործուղումների դրամատրանսպորտային ծախսեր (տեղաշարժ)	422130									
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ		423900									
	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423990	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Մասնագիտական ծառայություններ		424100									
	Մասնագիտական ծառայություններ	424110	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում		425100									
	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425110	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում		425200									
	Տրանսպորտային սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425210	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գրասենյակային սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425220									
	Այլ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425290									
Գրասենյակային նյութեր և հագուստ		426100									
	Գրասենյակային պիտույքներ	426110	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Տրանսպորտային նյութեր		426400									
	Վառելիքի ծախսեր	426410	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար	426490									
Կենցաղային և հանրային սննդի նյութեր		426700									
	Կենցաղային նյութեր (մաքրող և լվացքի նյութեր)	426710	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Կենցաղային այլ նյութեր (հնդամյան նյութեր ապահովիչներ)	426730									
Այլ հարկեր		482200									
	Այլ հարկեր	482290	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Պարտադիր վճարներ		482300									
	Այլ պարտադիր վճարներ	482390	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Այլ ծախսեր		486000									
	Այլ ծախսեր	486090									

Գլխավոր
(ստորագրություն)

Ռեսուրսների և գնումների կառավարման բաժնի պետ
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 4
2026թ. « 09 » «փետրվարի » կնքված
N ԴՏՊ – Ծ1153.Մ11001/26-2 պայմանագիր

Նախարարություն՝	Կազմակերպություն՝
հասցե՝	հասցե՝
հ/հ	հ/հ
հվհհ	հվհհ

ԱԿՏ
Հանձնման-ընդունման

« »« » 2026թ.

Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝
Նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Մանգասարյանի, և Կազմակերպությունն՝ ի դեմս Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռ. Սարգսյանի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման վերաբերյալ, պատասխանատու ստորաբաժանման « »« » 2026թ. N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Միջոցառումների իրականացումը համապատասխանում է պայմանագրով նախատեսված Միջոցառումներին և տրամադրման ժամանակացույցին՝ կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը « »« » 2026թ–ից « »« » 2026թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Միջոցառումները.

Համառոտ նկարագիրը	*Քանակը*	*Նվազագույն շահավետ գինը՝մեկ միավորի հաշվարկով (դրամ)*	*Մեկ միավորի գինը (դրամ)*	*Մեկ միավորի համար տրամադրվող դրամաշնորհի չափը (դրամ)*	*Վճարման ենթակա գումարը (հազ.դրամ)*	*Վճարման վերջնաժամկետը ամիս, ամսաթիվը*
1	2	3	4	5=3-4	6=2x.5	7
« Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրման աջակցություն»	x	x	x	x	x	x
Հաստատուն ծախս						
Ընդամենը	x	x	x	x		x

ընդունեց՝	հանձնեց՝
/ստորագրություն/	/ստորագրություն/
ազգանուն	ազգանուն

Կ.Տ

Հավելված N 5
2026թ. 09 » «[illegible]» կնքված
N ԴՏՊ – Ծ1153.Մ11001/26-2 պայմանագրի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

0.0.2026թ.

Պայմանագրի անվանումը - Պետության կողմից դրամաշնորհի ձեվով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին

Պայմանագրի կնքման ամսաթիվը - 0.00.2026թ.

Պայմանագրի համարը – ԴՏՊ – Ծ1153. Մ11001/26-2

Նախարարության անվանումը* - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Կազմակերպության անվանումը - «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում Կատարողը « ». .2026թ.- « ». .2026թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունները

№	Մատուցված ծառայությունների					
	Անվանումը	Տեխնիկական նկարագրերի համառոտ շարադրանքը *	Քանակական բնութագիրը		Կատարման ժամկետը	
			Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված ժամանակա-ցույցի	Փաստացի
1	2	3	4	5	6	7
1	**« Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրման աջակցություն»**				« ». .2026թ.- « ». . 2026թ.	« ». .2026թ.- « ». . 2026թ.

Նշումներ անհամապատասխանության մասին

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ **ԴՐԱԿԱՆ** եզրակացություն
(Դրական, բացասական)

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

Անուն Ազգանուն _____
ստորագրություն

*Ծանոթություն. վերոնշյալ աշխատանքը կավարտվի 2026թ. :

ՀԱՍՏԱՏՈՒՄԵՄ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար

_____ Ա. Մանգասարյան

«09» «փետրվար» 2026թ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**վերջնաժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1.	Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրման աջակցություն:	Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրում, երեք ծրագրի և մեկ միջոցառման գնահատման իրականացում:	1. 1184. «Ավանդների և այլ փոխհատուցումներ», 1088 «Զբաղվածության ծրագիր», 1225 «Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն» ծրագրերի և 1117. «Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի «11003. Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում»	**Ակնկալվող արդյունքներ** 11184. «Ավանդների և այլ փոխհատուցումներ», 1088 «Զբաղվածության ծրագիր», 1225 «Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն» ծրագրերի և 1117. «Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի «11003. Հանրային իրազեկման միջոցառումների	31.12.2026	Սույն պայմանագրով նախատեսված և օրենսդրությամբ չարգելված միջոցների շրջանակներում:

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
			միջոցառման մոնիթորինգի և գնահատման իրականացում: 2.ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2022 թվականի օգոստոսի 3-ի N 100-Ա/1 «Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի (մատուցվող ծառայությունների) մշտադիտարկման և գնահատման կարգը և մեթոդաբանությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի հունիսի 28-ի N 70–Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանի լրամշակում 3. ՀՀ ԱՍՀ նախարարության ենթակայությամբ գործող երեխաների շուրջօրյա և ցերակային խնամք իրականացնող կազմակերպությունների,	իրականացում» միջոցառումը գնահատված են: 2.ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2022 թվականի օգոստոսի 3-ի N 100-Ա/1 հրամանի լրամշակված նախագիծը առկա է: 3. Երեխաների և տարեցների ոլորտներում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի գործիքակազմը լրամշակված է: **Գնահատման չափանիշներ** Աշխատանքները, կատարվել են սահմանված ժամկետում:		

NN Հ/Հ	Իրականացվող գործունեության տեսակը				
	գործունեությունը	Ընդհանուր բնութագրում	Գործունեության իրականացման ընթացքում առաջացած թափոնների տեսակները, դասերը, կազմը, հատկանիշները	Վնասակար նյութերի արտանետումներ մթնոլորտային օդում	Աղտոտիչ նյութերի արտանետումներ ջրային մարմիններում

Ս. Հովհաննիսյան

<< աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վարչական իրավական ակտերի նախագծերի, նորմատիվային իրավական ակտերի նախագծերի և դրանց հետ կապված այլ փաստաթղթերի մասնագիտացված փորձաքննության կազմակերպման և անցկացման մասին >>

Պլան-ժամանակացույց
«Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում» ծրագրով նախատեսված « Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրման աջակցություն» հետազոտության

Հ/Հ	Գործողության անվանումը	Կատարման ժակետը
Ա	1184. «Ավանդների և այլ փոխհատուցումներ», 1088 «Զբաղվածության ծրագիր», 1225 «Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն» ծրագրերի և 1117. «Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի «11003. Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում» միջոցառման մոնիթորինգի և գնահատման իրականացում, այդ թվում	05.01.2026-30.11.2026
1.	**Տեղեկանքի և ՄԳ անձնագրի մշակում, այդ թվում**	**30.03. 2026**
1.1.	Տեղեկատվության հավաքագրում՝ ըստ ԱՍՀԱԻ-ի կողմից ներկայացված ձևաչափի	10.02.2026
1.2.	Տեղեկանքի և անձնագրի նախագծի մշակում	01.03.2026
1.3.	Մշակված նախագծի քննարկում և առաջարկությունների ներկայացում	10.03.2026
1.4.	Տեղեկանքի և անձնագրի վերջնական մշակում	30.03.2026
2.	**Տրամաբանական շրջանակի նախագծի մշակում և մշտադիտարկման ցուցանիշների հավաքագրում, այդ թվում**	**30.05.2026**
2.1.	Տրամաբանական շրջանակի նախագծի մշակում	30.03.2026
2.2.	Հավաքագրվող ցուցանիշների ձևաչափի մշակում	15.04.2026
2.3.	Հավաքագրվող տեղեկատվության վերաբերյալ քննարկումների կազմակերպում՝ ըստ անհրաժեշտության	20.04.2026
2.4.	Տեղեկատվության ներկայացում՝ ըստ ձևաչափի	30.05.2026
3.	**Տրամաբանական շրջանակի վերջնական մշակում, այդ թվում**	**15.06.2026**
3.1.	Մշակված նախագծի քննարկում և առաջարկությունների ներկայացում	10.06.2026
3.2.	Տրամաբանական շրջանակի վերջնական մշակում	15.06.2026
4.	**Գնահատման ցուցանիշների հավաքագրում, այդ թվում**	**30.09.2026**
4.1.	Հարցաթերթերի նախագծերի մշակում	30.06.2026
4.2.	Մշակված հարցաթերթերի նախագծերի վերաբերյալ քննարկումների անցկացում և առաջարկությունների ներկայացում	05.07.2026
4.3.	Հարցաթերթերի վերջնական մշակում և փորձարկում	15.07.2026

Հ/Հ	Գործողության անվանումը	Կատարման ժակետը
4.4.	Ընտրանքի ձևավորում, հարցումների անցկացում, տվյալների մուտքագրում և վերլուծական բազաների ձևավորում	30.09.2026
5.	**ՄԳ ամփոփ հաշվետվության պատրաստում, այդ թվում**	**30.11.2026**
5.1.	ՄԳ հաշվետվության նախագծի պատրաստում	10.11.2026
5.2.	ՄԳ հաշվետվության նախագծի վերաբերյալ կարծիքների ներկայացում	20.11.2026
5.3.	ՄԳ հաշվետվության վերջնական լրամշակում	30.11.2026
Բ.	ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2022 թվականի օգոստոսի 3-ի N 100-Ա/1 «Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի (մատուցվող ծառայությունների) մշտադիտարկման և գնահատման կարգը և մեթոդաբանությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի հունիսի 28-ի N 70–Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանի լրամշակում:	Հունվար – օգոստոս
Գ.	ՀՀ ԱՍՀ նախարարության ենթակայությամբ գործող երեխաների շուրջօրյա և ցերակային խնամք իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև պատվիրակված ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների մոնիթորինգի գործիքակազմի լրամշակում	Մարտ – սեպտեմբեր
Դ.	Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող միջոցառումների մոնիթորինգի գործիքակազմի լրամշակում:	Մայիս – հոկտեմբեր
Ե.	Տարեկան ամփոփ հաշվետվության ներկայացում	Դեկտեմբեր

Նախարարություն՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մանգասարյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Կազմակերպություն՝

«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝

_____ Ռ. Սարգսյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Մատուցվելիք ծառայության նկարագիր
«Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում» ծրագրով նախատեսված միջոցառումների շրջանակներում «Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրման աջակցություն» միջոցառման

«Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրման աջակցություն» միջոցառումն իրականացվելու է «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Ազգային ինստիտուտի) կողմից: Միջոցառման շրջանակներում Ազգային ինստիտուտը կաջակցի Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի 22.1 կետով նախատեսված միջոցառման 6-րդ ենթակետերով սահմանված ակնկալվող արդյունքների ստացմանը:

Միջոցառման արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ոլորտում իրականացվող ծրագրերը կարիք ունեն արդյունավետ կառավարման և դրա շրջանակներում կարևոր է ծրագրերի իրականացման վերաբերյալ հիմնախնդիրների բացահայտումը, դրանց լուծման տարբերակների նախանշումը, ինչպես նաև ծրագրերը շարունակելու, դադարեցնելու կամ փոխելու վերաբերյալ հիմնավորված որոշումների կայացումը:

1. Ծրագրի նպատակը

Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի արդյունավետության ապահովման նպատակով աջակցել.

1) Ոլորտում առկա խնդիրների բացահայտմանը և իրականացվող ծրագրերի հասցեականության բարձրացմանը,
2) Շահառուների և այլ շահագրգիռ կողմերի ծրագրերից բավարարվածության աստիճանի գնահատմանը,
3) ՀՀ պետական բյուջեի միջոցների նպատակային օգտագործմանը:

2. Խնդիրները, որոնց լուծմանն ուղղված է միջոցառումը

1.ՄԳ համակարգի միջոցով սոցիալական պաշտպանության ծրագրերում առկա խնդիրների բացահայտում, այդ խնդիրների լուծման մեխանիզմների ու միջոցառումների մշակում:

3. Նախատեսվող միջոցառումներ

1. ՀՀ 2025 թվականի պետական բյուջե ներառված՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) միջոցով իրականացվող 1184. «Ավանդների և այլ փոխհատուցումներ», 1088 «Զբաղվածության ծրագիր», 1225 «Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն» ծրագրերի և 1117. «Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի «11003. Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) 2024 և 2025 թվականների արդյունքների մոնիթորինգի և գնահատման իրականացում, այդ թվում.

1) Ծրագրերի ՄԳ տեղեկանքի, անձնագրի և տրամաբանական շրջանակի մշակում,
2) Ծրագրերի շահառուների կարծիքի ուսումնասիրությանն ուղղված հարցաթերթերի մշակում, դաշտային աշխատանքների իրականացում, հարցումների արդյունքների վերլուծություն,
3) Ծրագրերի վերաբերյալ քանակական տվյալների ստացում և դրանց վերլուծություն,
4) Ծրագրերի գնահատում և հաշվետվությունների պատրաստում:

2. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2022 թվականի օգոստոսի 3-ի N 100-Ա/1 «Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի (մատուցվող ծառայությունների) մշտադիտարկման և գնահատման կարգը և մեթոդաբանությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի հունիսի 28-ի N 70–Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանի լրամշակում:

3. ՀՀ ԱՍՀ նախարարության ենթակայությամբ գործող երեխաների շուրջօրյա և ցերակային խնամք իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև պատվիրակված ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների մոնիթորինգի գործիքակազմի լրամշակում:

4.Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող միջոցառումների մոնիթորինգի գործիքակազմի լրամշակում:

4. Ակնկալվող արդյունքները

1) Ծրագրերի և Միջոցառման գնահատման հաշվետվությունների ներկայացում,
2) ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2022 թվականի օգոստոսի 3-ի N 100-Ա/1 հրամանի նախագծի լրամշակված տարբերակի ներկայացում,
3) ՀՀ ԱՍՀ նախարարության ենթակայությամբ գործող երեխաների շուրջօրյա և ցերակային խնամք իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև պատվիրակված ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների մոնիթորինգի լրամշակված գործիքակազմի ներկայացում:

4) Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող միջոցառումների մոնիթորինգի լրամշակված գործիքակազմի ներկայացում:

5 Մատուցված ծառայության հանձնումը և դրա դիմաց վճարումը

Ազգային ինստիտուտը ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնում է Նախարարության կողմից գրավոր հաստատված պայմանագրի համաձայն:

Աշխատանքներն իրականացվելու են հաստատված ժամանակացույցին համապատասխան, արդյունքները քննարկվելու են Նախարարության աշխատակազմի ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչությունում և այլ ստորաբաժանումներում, անհրաժեշտության դեպքում՝ նաև շահագրգիռ այլ մարմիններում և հաշվետվության ձևով էլեկտրոնային տարբերակով ներկայացվելու են Նախարարություն 2026 թվականի դեկտեմբերի երրորդ տասնօրյակում:

Մատուցված ծառայության դիմաց վճարումը կիրականացվի Նախարարության կողմից՝ ծառայության գծով պատասխանատու ստորաբաժանման և ոլորտը համակարգող նախարարի տեղակալի դրական եզրակացության և երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ համաձայն կնքված պայմանագրի:

Նախարարություն՝	**Կազմակերպություն՝**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար՝	«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝
_____ Ա. Սանգասարյան	_____ Ռ. Սարգսյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

1. Հիմնարկի անվանումը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

2.Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախարարություն
10	09	02	1153	104016

2. Ծրագրի անվանումը՝ «Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր»

Միջոցառման անվանումը՝ «Մեթոդաբանական ձեռնարկների մշակում՝ հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում»

3. Հիմնարկին սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը՝ ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

4. Գանձապետական բյուջետային կամ արտաբյուջետային հաշվի համարը՝ 900011216091

5. Պայմանագրի կնքման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը՝
«09» «փետրվար» 2026թ. N ԴՏՊ -Ծ1153.Մ11001/26-2

6. Գնման ձևը՝ ԴՄ

7. Պայմանագրի կողմ հանդիսացող մատակարարի (կապալառուի կամ ծառայություն մատուցողի) անվանումը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ

գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ուլնեցու 68

հարկային հաշվառման կոդը՝ 00802759

սպասարկող բանկի (մասնաճյուղի) անվանումը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

հաշվեհամարը՝ 900018003831

8. պայմանագրի կատարման ժամկետը՝ «31» «դեկտեմբեր» 2026թ.

Չափի միավորը՝ հազար դրամ

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը՝	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը՝	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2026 թվականի պետական բյուջեից միջոցների կամ արտաբյուջետային միջոցների հաշվին, ընդ որում՝												
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ	սեպտ	հոկտ	նոյեմբ	դեկտ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	463700	2,615.4	5230.8	7846.2	10461.6	13077.0	15692.4	18307.8	20923.2	23538.6	26154.0	28769.6	31385.0	31,385.0

Պայմանագրով նախատեսված կանխավճարի													
Հատկացման վերջին ժամկետը	2026 թվականի մարման ժամկետը (Բյուջեից հատկացված կամ արտաբյուջեից հատկացված կանխավճարի գծով)												
	I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IVեռամսյակ			Ընդամենը
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ	սեպտ	հոկտ	նոյեմբ	դեկտ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
.02.2026												2,615.4	2,615.4

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը՝ Ա. Մանգասարյան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի ստորագրությունը Ս. Հովսեփյան

«09» «փետրվար» 2026 թվական

Կնիքի տեղը